

ՊԱՏՎԻ ՎԱՐՁՔԸ

ԻՆՉՊԵՍ ԱՐԺԱՆԱՆԱԼ
ԱՍՏՕՈՒ ԲԱՐԵՀԱՏՈՒԹՅԱՆՆ
ՈՒ ՕՐՀՆՈՒԹՅԱՆԸ



ՁՈՆ ԲԻՎԵՐ

«ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՇԱՐԺՎՈՂՆԵՐԻ
ՀԱՆՐԱՃԱՆՆԵՐԻ»

ՆԱԽԱԴԻՊՈՒՄ

ՊԱՏՎԻ ՎԱՐՁՔԸ

*Ինչպես արժանանալ Աստծո
բարեհաճությանն ու օրհնությանը*



ԶՈՆ ԲԻՎԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ	7
ԳԼՈՒԽ 1 Վարձքը սպասում է քեզ	9
ԳԼՈՒԽ 2 Մասնակի կամ ոչ մի վարձք	21
ԳԼՈՒԽ 3 Ամբողջ վարձք	32
ԳԼՈՒԽ 4 Առաջնորդից քիչ բան է կախված	43
ԳԼՈՒԽ 5 Իշխանություն	55
ԳԼՈՒԽ 6 Ժանտաքարո իշխանություն	73
ԳԼՈՒԽ 7 Պատվել քաղաքային իշխանություններին	86
ԳԼՈՒԽ 8 Պատվել հասարակական առաջնորդներին	106
ԳԼՈՒԽ 9 Պատվել ընտանեկան առաջնորդներին	118
ԳԼՈՒԽ 10 Պատվել եկեղեցական առաջնորդներին	138
ԳԼՈՒԽ 11 Կրկնակի պատիվ	159
ԳԼՈՒԽ 12 Պատվել մեզ հավասարներին	182
ԳԼՈՒԽ 13 Պատվել մեզ վստահվածներին	198
ԳԼՈՒԽ 14 Պատիվ ընտանիքում. երեխաներ	215
ԳԼՈՒԽ 15 Պատիվ ընտանիքում. կին	230
ԳԼՈՒԽ 16 Պատվել բոլորին	246
ԳԼՈՒԽ 17 Պատվել Աստծուն	255

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում Լիզային: Երջանիկ եմ, որ դու իմ կինն ես, լավագույն ընկերը, ամենահավատարիմ օգնականը, գործընկերը, մեր երեխաների մայրը և իմ սիրելին: Դու իսկապես Աստծո նվերն ես ինձ համար, իմ գանձն ես: Ես սիրում եմ քեզ, թանկագինս:

Շնորհակալ եմ մեր չորս որդիներից՝ Էդիստնից, Օստինից, Ալեքսանդրից և Արդենից: Չեզնից յուրաքանչյուրը մեծ ուրախությամբ է լցնում իմ կյանքը: Ամեն մեկդ յուրահատուկ գանձ էք ինձ համար: Շնորհակալություն, որ օգնում էք իրականացնելու Աստծուց ինձ շնորհված կոչումը, ոգեշնչում գրքեր գրելու և ճանապարհորդելու: Ինձ դուր է գալիս ժամանակ անցկացնել ձեզնից յուրաքանչյուրի հետ:

Շնորհակալություն «Միջազգային ավետաբեր» ծառայության աշխատակազմին և խորհրդի անդամներին իրենց անվարան աջակցության և հավատարմության համար: Չեզնից յուրաքանչյուրի հետ աշխատելն ինձ մեծ բավականություն է պատճառում. ինձ համար պատիվ է ձեզ հետ Աստծուն ծառայելը: Ես ու Լիզան շատ ենք սիրում ձեզ:

Շնորհակալություն աշխարհի բոլոր անկյուններում գտնվող մեր բազմաթիվ ծառայող ընկերներին: Այս գրքում բավականաչափ տեղ չկա գրելու բոլորիդ անունները: Շնորհակալություն, որ պատիվ և արտոնություն ունեմ ծառայելու ձեր եկեղեցիներում և մասնակցելու ձեր կոնֆերանսներին: Ես սիրում եմ ձեզ, հովիվներ և ծառայողներ, որ հավատարմությամբ ծառայում էք Աստծուն:

ՊԱՏՎԻ ՎԱՐՁՔԸ

Շնորհակալություն թո՛ւմ Ուիլյամսին և Ռոլֆ Չետերսոնին, որ քաջալերեցին ինձ և հավատացին այն ուղերձին, որն Աստված բորբոքել էր իմ սրտում:

Շնորհակալություն Գարի Թերաշիտային այս գրքում իր խմբագրական հմտությունները ցուցաբերելու և, ամենակարևորը, ինձ աջակից լինելու համար:

Շնորհակալություն «Հավատքի խոսքեր» հրատարակչության ամբողջ աշխատակազմին իրենց աջակցության և մասնագիտական օգնության համար: Չեզ հետ աշխատելը հեշտ է և հրաշալի:

Եվ ամենակարևորը, իմ անկեղծ երախտագիտությունն եմ հայտնում իմ Տիրոջը: Բառերով հնարավոր չէ արտահայտել այն ամենը, ինչ որ Դու արել ես Զո ժողովրդի եւ ինձ համար: Չեմ կարող նկարագրել այն մեծ սերը, որ ունեմ Զո հանդեպ:

Վարձքը սպասում է քեզ



Պատիվ... Այս արժանիքը գրեթե վերացել է քսաննեկերորդ դարում, բայցևայնպես պատիվ հասկացությունը դեռևս կարող է շարժել մեր սիրտը: Կինոնկարների հերոսները, որոնք պատիվ են ցուցաբերում, ստիպում են մեզ արտասվել, որովհետև նրանց արարքներում մենք տեսնում ենք խիզախության և ինքնագոհության դրսևորում: Վերանայե՛ք բոլոր ժամանակների ամենահայտնի ֆիլմերը և կտեսնեք, որ պատվի գաղափարը միահյուսված է դրանց բովանդակություններին: Մենք հիացմունքով ծափահարում ենք՝ տեսնելով այս արժանիքը ֆիլմերում, բայց արդյո՞ք իրական կյանքում մենք այդպիսին ենք: Այն, ինչ կարող էր դառնալ մեր ամենօրյա կյանքի ուղեկիցը, մեր սերնդի համար հանկարծ օտար դարձավ:

Ես փափագում եմ տեսնել, թե ինչպես է վերականգնվում պատիվը Աստծո որդիների և դուստրերի կյանքում, որովհետև դա այն կարևորագույն բանալին է, որը մեր առջև բացում է Աստծո օրհնությունների դուռը: Այդ իսկ պատճառով մեր հոգիների թշնամին փորձում է անել ամեն ինչ, որպեսզի գրոյի հավասարեցնի պատվի ճշմարիտ զորությունը:

Պատիվն արժանի է մեծ վարձքի. Աստված ցանկանում է, որ դու ունենաս այդ վարձքը: Այն ունի զորություն մեծապես հարստացնելու քո կյանքը:

Դու պատրաստվում ես մի ճանապարհորդության, որը քեզ կմոտեցնի Աստծո սրտին: Նա է ստեղծել այն ամենը, ինչն արժանի է պատվի: Ես աղոթում եմ, որպեսզի այս հայտնված ճշմարտությունները խոր և գործնական ազդեցություն թողնեն քո կյանքի վրա: Շատ մարդիկ չափազանց ուշ են սովորել այս դասերը: Այդ պատճառով Հովհաննես առաքյալը զգուշացնում է.

«Ձգո՛ւյշ կացեք ձեր անձերին, որ չկորցնենք այն, որ վաստակեցինք, այլ որ բոլոր վարձքն առնենք»:

– Բ Հովհաննեսի 8

Հովհաննեսը գրեթե մեկ դար ապրած ծերունի էր, երբ գրում էր այս խոսքերը («Կլարկի մեկնություն», «Աբինյոն փրես» 1977, Հավելված 6.6): Նա երկար տարիների փորձ ուներ և դժվարությամբ ձեռք բերած իր իմաստությունը փոխանցեց մեզ մեր օգտի համար: Հովհաննեսը պատկանում էր այն մարդկանց թվին, ովքեր երկար և պտղաբեր կյանք են ունեցել և ձեռք բերել մի այնպիսի առավելություն, որը ձեռք է բերվում միայն կոչման, հավատքի և զորության մեջ հավատարմությամբ քայլելով: Ես դա անվանում եմ «*պսակի կամ փսակի օծություն*». երբ այդ մարդիկ խոսում են, իմաստունները լսում են:

Վերջին քսանհինգ տարիների ընթացքում ինձ բախտ է վիճակվել հանդիպելու այդպիսի տղամարդկանց և կանանց: Նրանք դեսպաններ են, ովքեր հիանալի ծառայել են իրենց կյանքում և բարձրացել մի աստիճանի, որտեղից կարող են ետ նայել և հետևություններ անել: Նրանց նման փորձառու վետերաններն ունեն մի քանի ընդհանուր հատկություններ, որոնցից երեքը ցանկանում են նշել: Առաջինը՝ նրանք անմիջապես անդրադարձնում են խնդրի էությանը, չեն պտտվում հարցի շուրջ և ժամանակ չեն վատնում ոչ կարևոր բաների վրա: Երկրորդը՝ նրանք մի քանի խոսքով շատ բան են ասում: Երրորդը՝ նրանք ընտրում և ասում են այնպիսի խոսքեր, որոնք կշիռ ունեն: Նույն խոսքը, հնչելով նրանց շուրթերից, շատ ավելի ծանրակշիռ է, քան մեկ ուրիշի, ով

այդքան երկար և պտղաբեր կյանք չի ունեցել: Ես նկատել եմ, որ կարող եմ ամիսներ շարունակ մտորել այդ փորձառու վետերանների ասած մեկ կամ երկու նախադասությունների շուրջ:

Եթե այս լույսի ներքո նայենք Հովհաննես առաքյալի խոսքերին, կարելի է եզրակացնել, որ նա շատ կարևոր բան էր ասում: Իրականում տարիներ շարունակ ես խորհում եմ նրա խոսքերի մասին և մինչև օրս էլ հայտնություններ ստանում: Եկեք մաս առ մաս քննենք նրա հորդորը:

Մի՛ կորցրեք ձեր ժառանգությունը

Հովհաննեսն սկսում է հետևյալ խոսքերով. «*Ձգո՛ւյ՜ կացեք ձեր անձերին...*»: Մեզմից յուրաքանչյուրին նա խրախուսում է զգույշ լինել, քննել ինքներս մեզ և հետևել մեր անձերին: Նա հրատապություն է հաղորդում իր խոսքերին, քանի որ այն, ինչ պատրաստվում է ասելու, չի կարելի մակերեսորեն ընդունել. հարկավոր է լրջորեն մտորել նրա ասածների շուրջ:

Մենք պետք է շատ ուշադիր լինենք, որպեսզի չկորցնենք այն ամենն, ինչի համար ջանք ենք թափել: Սա մի փոքր սթափեցնող է: Փաստորեն, մենք կարող ենք կորցնել այն, ինչ ձեռք ենք բերել մեր ջանքերի շնորհիվ: Պատկերացրե՛ք մի հողագործի, ով աշխատում է առանց ձեռքերը ծալելու: Նա աշխատում է օրվա տապին՝ դաշտը մաքրելով քարերից և աղբից, որոնք կարող են խոչընդոտել բերքատվությանը: Մաքրելուց հետո սկսում է հերկել, փխրեցնել հողը և նախապատրաստել ցանքի: Յանքից հետո օր ու գիշեր ջանք է թափում, որպեսզի նպաստավոր պայմաններ ստեղծի սերմերի աճի համար. պարարտացնում է հողը, մաքրում և ջրում: Երբ հայտնվում են ծիլերը, հողագործի աշխատանքը չի ավարտվում. նա դեռ պետք է պաշտպանի դաշտը վնասատուներից և աղետներից: Սակայն պատկերացրե՛ք, որ բերքահավաքից մի քանի շաբաթ առաջ հողագործն այնքան հոգնած է լինում, որ հանձնվում է կամ էլ լսում մոտալուտ փոթորկի մասին, բայց անտեսում այդ լուրը: Բոլոր ջանքերը հավասարվում են զրոյի, քանի որ վերջին

վայրկյանին նա կորցնում է իր ամբողջ բերքը: Ժամանակի, փողի, աշխատանքի և միջոցների ինչպիսի՞ կորուստ:

Իսկ ի՞նչ կասեք այն գործարարի մասին, ով տարիներ շարունակ ջանք է թափում իր ընկերությունը կառուցելու համար, բայց վերջում ամեն ինչ կորցնում է մի քանի սխալ որոշումների պատճառով: Կրկին ողբերգական է... Երկու դեպքում էլ հսկայական աշխատանքի արդյունքները մեկ ակնթարթում կորչում են:

Ահա թե ինչու Աստվածաշունչը շարունակ կոչ է անում մեզ լավ ավարտելու մեր ընթացքը. «...ով որ *համբերի մինչև վերջ*» (տե՛ս Մատթ. 10.22, 24.13, Մարկ. 13.13, շեղագիրը հեղինակինն է), և կրկին. «Որովհետև մասնակից եղանք Քրիստոսին, եթե այն հաստատության սկիզբը *մինչև վերջ* պինդ բռնենք» (Եբր. 3.14), կրկին. «Եվ ով որ հաղթում է և Իմ գործերը պահում *մինչև վերջ*...» (Հայտն. 2.26, շեղագիրը հեղինակինն է): Այս ցուցակը շարունակվում ու շարունակվում է:

Քրիստոնեությունը կարճ տարածության մրցավազք չէ, այլ համբերության և դիմացկունության մարաթոն: Կարևոր չէ, թե ինչպես ենք սկսել մեր վազքը, կարևորն այն է, թե ինչպես կավարտենք, իսկ դա կախված է մեր որոշումներից, որոնք, որպես կանոն, ձևավորվում են ողջ ճանապարհի ընթացքում:

Կյանքի վճռորոշ պահեր

Մի անգամ իմ որդիներից մեկի կյանքում տեղի ունեցավ մի դեպք: Նա ցանկանում էր անել մի բան, որն ամենևին դուր չէր գալիս ինձ: Գիտեր, որ ես հավանություն չէի տալիս իր մտադրությանը, սակայն նա արդեն բավականին մեծ էր ինքնուրույն որոշում կայացնելու համար, ուստի վերջնական խոսքն իրենն էր:

Անցավ ժամանակ, և ես իմացա, որ նա վարվել էր իմ խորհրդին հակառակ: Մենք նստեցինք զրուցելու և միասին քննարկելու նրա արարքը: Ես նրան ասացի. «Ընտրությունը քոնն էր, բայց ես ցանկանում եմ օգտագործել այս առիթը, որպեսզի մի կարևոր բան սովորեցնեմ քեզ:

Երիտասարդ Ռոբոլամ թագավորը գահ բարձրանալուց կարճ

Ժամանակ անց իր ժողովրդից այսպիսի խոսքեր լսեց. «Հայրդ մեր կյանքը դժվարացրել էր մեզ վրա դրված պահանջների պատճառով: Թեթևացրո՛ւ այդ լուծը, և մենք ուրախությամբ կժառայենք քեզ»: Ռոբովամի հոր խորհրդականները նրան ասացին. «Եթե դու այս ժողովրդին ծառա լինես, մտածես նրանց կարիքների մասին և սրտացավությամբ արձագանքես դրանց, այն ժամանակ նրանք ամեն ինչ կանեն քեզ համար» (Գ. Թագ. 12.4-7, MES):

Երիտասարդ թագավորը մերժեց ծերերի բարի և իմաստուն խորհուրդը և գնաց իր հասակակիցների մոտ: Նրանք ասացին. «Այն ժողովրդին, որը դժգոհում է, թե քո հայրը շատ դաժան էր իր հանդեպ և ուզում է, որ թեթևացնես իր լուծը, այսպե՛ս ասա. «Իմ ճկույթը հաստ է իմ հոր մեջքից: Եթե կարծում եք, թե իմ հոր օրոք կյանքը դժվար էր, ապա դրա կեսը դեռ չեք տեսել: Իմ հայրը ձեզ խարազաններով էր խրատում, բայց ես ձեզ շղթաներով արյունվա կանեմ»» (10, 11-րդ խոսքեր, MES):

Ռոբովամ թագավորը հետևեց իր ընկերների խորհրդին, ինչը ողբերգական հետևանքներ ունեցավ: Նրա հոր՝ Սողոմոնի հիմնած թագավորությունը բաժանվեց, Իսրայելի տասներկու ցեղերից տասը մշտապես անջատվեցին. նրա թագավորության հինգ վեցերորդ մասն ազատվեց նրա երկաթե բռունցքից: Մեկ սխալ որոշումն ազդեց նրա ողջ կյանքի վրա»:

Հետո որդու ասացի. «Ե՛կ ետ գնանք: Հավանաբար տարիներ շարունակ Ռոբովամ արքայազնն ու նրա ընկերներն արհամարհել էին Սողոմոն թագավորի և ծերերի խորհուրդները: Միգուցե նրանք զվարճանում էին թագավորական պալատի սենյակներում՝ մեկը մյուսի ետևից դատարկելով գինու գավաթները և գաղտնի հռռուալով, իրենց կարծիքով, այդ անմիտ և ոչ ժամանակակից խորհուրդների վրա: Միգուցե Ռոբովամը մտածում էր. *«Ես կհամբերեմ, քանի դեռ արքայազն եմ, բայց երբ դառնամ թագավոր, չեմ լսի այդ հիմար ծերերին»*: Քանի դեռ նա արքայազն էր, ծերերի իմաստությունն անտեսելու և չգնահատելու որոշումը նրան մեծ վնաս չէր պատճառում: Նա չէր գիտակցում, որ կգա մի օր, երբ, իրեն

իմաստուն կարծելով, մեծ հիմարություն կգործի: Երբ *վճռորոշ պահը* եկավ, Ռոբովանն իմաստուն որոշում կայացնելու անհրաժեշտ սովորություն չուներ»:

Ես շարունակեցի. «Բոլորիս կյանքում լինում են *վճռորոշ պահեր*: Դրանք նման են քննությունների, բայց մենք չենք իմանում, որ քննվում ենք, քանի դեռ դրանք չեն ավարտվել:

Որդի՛ս, դու չլսեցիր իմ խորհուրդը և այս անգամ ոչ մի վնաս չկրեցիր: Բայց կգա օրը, երբ կկանգնես *կյանքի վճռորոշ պահի* առաջ: Եթե մինչև այդ քո մեջ ձևավորվի իմաստուն խորհրդին ականջ դնելու սկզբունքը, դու հեշտությամբ կկարողանաս հետևել դրան և մեծ վարձք կունենաս»:

Եկեք մի կողմ թողնենք որդուս հետ կապված դեպքը և քննարկենք մեկ այլ օրինակ: Իսրայելի զավակների մեջ չէր ձևավորվել Աստծո Խոսքին ականջ դնելու սկզբունքը: Աստված ազատեց նրանց գերությունից, սակայն նրանք շարունակ դժգոհում և ըմբոստանում էին Նրա դեմ: Լինում էին ժամանակներ, երբ նրանց ըմբոստությունը կարծես անտեսվում և անպատիժ էր մնում՝ ոչ մի ակնհայտ ազդեցություն չթողնելով նրանց վրա: Սակայն օր օրի նրանց մեջ որոշակի վարքագիծ էր ձևավորվում: Վերջ ի վերջո, եկավ նրանց *կյանքի վճռորոշ պահը*: Տասներկու լրտեսներ ուղարկվեցին Քանան, որպեսզի լրտեսեն այն երկիրը, որ Տերը նախատեսել էր նրանց համար: Լրտեսները վերադարձան բացասական լուրերով, և ամբողջ ժողովուրդը, հետևելով նրանց, սովորության համաձայն, սկսեց տրտնջալ, բայց այս անգամ դա շատ թանկ նստեց նրանց վրա: Նրանք երբեք չմտան Խոստմունքի երկիր և մինչև իրենց կյանքի վերջը թափառեցին անապատում: Վճռորոշ պահին նրանք կորցրին այն, ինչի համար այդքան երկար ժամանակ ջանք էին թափել: Այդ կորուստն այլևս հնարավոր չէր ետ բերել: Չնայած իսրայելացիները տեսան իրենց վարձքը՝ Խոստմունքի երկիրը, այդպես էլ չկարողացան մտնել այնտեղ, նույնն էլ Ռոբովամը. նա կորցրեց Իսրայելի տասը ցեղերը, որը մեծ կորուստ էր ոչ միայն իր, այլև իրենից հետո եկող բոլոր սերունդների համար:

Վարձքը սպասում է քեզ

Այս պատմության մեջ մի կարևոր դաս կա թե՛ ծերերի, թե՛ երիտասարդների համար. մեզ անհրաժեշտ է ոչ թե ուղղակի հնազանդվել Աստծուն, այլ հասկանալ Նրա սիրտը: Այդ ժամանակ կնկատենք Նրա հրահանգների ետևում թաքնված իմաստությունը, ոչ թե դրանք կրնդունենք որպես օրենքներ: Ռոբոլամն այդպես էլ չհասկացավ ո՛չ իր հոր, ո՛չ էլ ծերերի սիրտը: Իսրայելացիների ավագ սերունդն այդպես էլ չկարողացավ տեսնել, թե ինչ էր անում Աստված. նրանք չհասկացան իրենց հանդեպ Աստծո ունեցած սերն ու բարությունը: Այդ պատճառով էլ ամեն ինչ կորցրին:

Այժմ եկե՛ք նայենք մեղալի հակառակ կողմը: Աստվածաշնչում կան օրինակներ, երբ որոշ անհատներ կարողացան հասկանալ Աստծո սիրտը և իրենց մեջ իմաստուն որոշումներ կայացնելու սկզբունք մշակել: Երբ նրանք, անտեղյակ լինելով, կանգնեցին *կյանքի վճռորոշ պահերի* առաջ, ճիշտ արձագանքեցին և մեծ վարձքի արժանացան:

Մեր աշխատանքի պտուղները չկորցնելու ամենահեշտ միջոցը Աստծո խորհուրդը մշտապես պատվելու սովորություն ձեռք բերելն է: Ամեն օր կանգնում ենք այնպիսի իրավիճակների առաջ, երբ անհրաժեշտ է ընտրություն կատարել և որոշում կայացնել: Կգա օրը, երբ ետ կնայենք և կտեսնենք այն պահերը, որոնք մեզ համար վճռորոշ են եղել: Եթե մեզ հաջողվել է ճիշտ որոշում կայացնելու սկզբունք մշակել և ճիշտ վարվել, ապա որոշ ժամանակ հետո կտեսնենք մեր վարձքը:

Վարձք

Եկե՛ք անցնենք հաջորդ մասին, որն ավելի լավ հասկանալու համար կրկին կարդանք ամբողջ խոսքը. «Ձգո՛ւյշ կացեք ձեր անձերին, որ չկորցնենք այն, որ վաստակեցինք, *այլ որ բոլոր վարձքն առնենք*» (Բ Հովհ. 8):

Ուշադրություն դարձրեք, որ Աստված վարձահատույց է լինում Իրեն փնտրողներին (տե՛ս Եբր. 11.6): Այս ճշմարտությունը պետք է խոր արմատ գցի մեր սրտերում: Իրականում Աստված սիրում է

վարձահատույց լինել: Ինչպե՞ս Նա ներկայացավ Աբրահամին: «Այս բաներից հետո տեսիլքում Տիրոջ խոսքը եղավ Աբրամին՝ ասելով. «...Մի՛ վախեցիր, Ես քո վահանն եմ, *քո չափազանց մեծ Վարչքը*» (Ծննդ. 15.1, շեղագիրը հեղինակինն է, NKJV):

Նա ասաց. «Ես... *քո չափազանց մեծ Վարչքն* եմ»: Չարմանալի է, թե ինչպես Աստված ներկայացավ Աբրահամին: Սաղմոս 19.9-11-ն արձագանքում է այս խոսքերին. «...Տիրոջ դատաստանները ճշմարիտ են, բոլորովին արդար... *նրանց պահպանությունում շարք հայրուցում կա*» (շեղագիրը հեղինակինն է):

Սաղմոս 57.2-ում կարդում ենք. «Ես Բարձրյալ Աստծուն եմ կանչում, Ով գործում է իմ օգտին և *վարչահայրույց լինում ինձ* (Ով իրականացնում է ինձ համար ունեցած Իր նպատակները)» (AMP, շեղագիրը հեղինակինն է):

Աստված վարձահատույց լինող է և սիրում է վարձահատույց լինել Իր զավակներին: Ես՝ որպես չորս որդիների հայր, ինչ-որ չափով զգացել եմ այդ հաճույքը: Սիրում եմ տեսնել, թե ինչպես են երեխաներիս աչքերը փայլում երախտագիտությունից և ինչպես են նրանք ուրախանում, երբ իրենց կատարած ճիշտ ընտրության համար պարգևատրվում են: Սակայն ես հասկացել եմ նաև, որ վատ վարքագծի համար մարդուն պարգևատրելը իմաստուն քայլ չէ: Վարձատրելով նրանց, ովքեր արժանի չեն վարձքի կամ չեն վաստակել այն՝ դուք զրկում եք նրանց գործելու դրդապատճառից, ինչը շատ կարևոր բան է:

Իմ տղաները գիտեն, որ ես սիրում եմ իրենց, սակայն տարիների ընթացքում նրանք հասկացել են, թե ինչ տարբերություն կա իմ սիրո և բարեհաճության միջև:

Աստված սիրում է մեզնից յուրաքանչյուրին, և Նրա սերը կատարյալ է: Սակայն չի նշանակում, որ չեն լինի այնպիսի ժամանակներ, երբ Նա դժգոհ կլինի մեր ընտրություններից և գործերից: Աստված վարձահատույց է լինում նրանց, ովքեր հաճեցնում են Իրեն և ականջ դնում Իր խորհուրդներին:

Ուշադրություն դարձրեք, որ Հովհաննեսն ասում է. «...որ *բոլոր*

վարձքն առնենք»: Երբ խորհում էի այս խոսքերի շուրջ, «բոլոր» բառը կարծես դուրս թռավ տողից: Ես մտածեցի. «Եթե կա բոլոր վարձք, ուրեմն կա նաև մասնակի վարձք և ակզամ ոչ մի վարձք» (հիշե՛ք, որ մենք այժմ խոսում ենք ոչ թե փրկության, այլ վարձքի մասին): Շարունակելով իմ մտորումները՝ եկա այն եզրակացության, որ Հովհաննեսը խոսում է գլխավորապես երկու կարևոր բանի մասին:

Առաջինը՝ Քրիստոսի ատյանն է: Պողոսն ասում է. «Բայց վստահ ենք և ավելի ընտրում ենք այս մարմնից դուրս գալ և Տիրոջ մոտ մտնել» (Բ Կորնթ. 5.8):

Մենք գիտենք, որ Պողոսն այստեղ չի խոսում ամբողջ մարդկության մասին, որովհետև երբ անհավատն իր մարմնից դուրս է գալիս, նա չի գնում Տիրոջ մոտ, այլ հայտնվում է դժոխքում: Միգուցե սա դաժան է հնչում, սակայն ճշմարտություն է: Հիսուսը եկավ աշխարհ ոչ թե մեզ դատապարտելու, այլ փրկելու: Աշխարհն արդեն դատապարտված էր Ադամի պատճառով, ով հավիտենական մահվան մատնեց մեզ (տե՛ս Հովհ. 3.17,18): Մահից հետո Տիրոջ մոտ կգնան միայն նրանք, ովքեր ընդունել են Հիսուս Քրիստոսին և իրենց կյանքն ամբողջությամբ նվիրել Նրան: Պողոսը շարունակում է դիմել հավատացյալներին՝ ասելով.

«Դրա համար էլ ջանք ենք անում, որ թե՛ մնանք և թե՛ դուրս գանք, հաճո լինենք Նրան: Որովհետև մենք ամենս պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև, որ ամեն մեկն ընդունի իր մարմնով ինչ որ գործեց՝ թե՛ բարի և թե՛ չար»:

– Բ Կորնթացիների 5.9,10

Յուրաքանչյուր հավատացյալ կանգնելու է Քրիստոսի ատյանի առջև: Այդ օրը մեզնից յուրաքանչյուրը վարձք է ստանալու իր գործերի դիմաց, որոնք հասցրել է կատարել երկրի վրա ապրած կարճ ժամանակահատվածում:

Աստվածաշնչի «Այսօրվա անգլերեն տարբերակում» գրված է. «Յուրաքանչյուրս կստանանք այն, ինչին արժանի ենք»:

Մենք չենք դատվի մեր մեղքերի համար, որովհետև Հիսուսի արյունը մաքրել է մեզ մեղքից և վերացրել մեղքի համար սահմանված պատիժը: Մենք կ'ան վարձք կատանանք, կ'ան կկորցնենք մեր վարձքը՝ կախված այն բանից, թե ինչպես ենք ապրել երկրի վրա: Մեր արարքները, խոսքերը, մտքերը և նույնիսկ շարժառիթները կքննվեն Նրա Խոսքի լույսի ներքո: Ժամանակավոր բաները, որոնց վրա կառուցել ենք մեր կյանքը, կոչնչանան. դրանց համար մենք ոչ մի վարձք չենք ստանա, իսկ հավիտենական բաները կվերածվեն անապական վարձքի (տե՛ս Ա Կորնթ. 3.14,15):

Կորուստները տարբեր կլինեն: Մեր ամբողջ գործը կարող է այրվել, չնայած դրան՝ մենք կփրկվենք ասես կրակի միջից: Սակայն կարող ենք նաև նստել Հիսուս Քրիստոսի գահի վրա և Նրա հետ թագավորել հավիտյան (տե՛ս Ա Կորնթ. 3.15, Հայտն. 3.21): Տարբերությունը հսկայական է: Առաջին դեպքում մենք ընդհանրապես վարձք չենք ստանում, երկրորդ դեպքում ստանում ենք ամբողջ վարձք, իսկ այդ երկուսի միջև ընկած է մասնակի վարձքը: Ատյանի այս որոշումները կոչվում են «հավիտենական դատաստաններ» (տե՛ս Եբր. 6.1,2), ինչը նշանակում է, որ այդ որոշումներն այլևս չեն ենթարկվի ոչ մի շտկման և փոփոխման: Այդ պատճառով կարելի է եզրակացնել, որ Քրիստոսի խաչի հանդեպ մեր վերաբերմունքը որոշում է, թե որտեղ կանցկացնենք հավիտենությունը, իսկ մեր քրիստոնեական ապրելակերպը որոշում է, թե *ինչպես* կանցկացնենք հավիտենությունը:

Ուստի շատ կարևոր է հստակ իմանալ, թե ինչ է ասում Սուրբ գիրքը հավիտենական դատաստանի և վարձքի մասին: Այդ գիտությունը կոչվում է Հիսուս Քրիստոսի մասին սկզբնական կամ տարրական ուսմունք:

Տարրական դպրոցում դրվում է մեր կրթության հիմքը. մենք սովորում ենք գրել, կարդալ, հաշվել և այլն: Հնարավոր է արդյոք պատկերացնել ուսումն ավագ դպրոցում կամ քոլեջում, եթե չգիտես գրել, կարդալ, գումարել կամ հանել: Իհարկե, ո՛չ: Սակայն շատ ու շատ հավատացյալներ փորձում են կառուցել իրենց քրիս-

տոնեական կյանքը՝ չունենալով Քրիստոսի մասին սկզբնական կամ տարրական ուսմունք: Այս հարցի հրատապությունն ինձ համար շարժառիթ հանդիսացավ գրելու «Հավիտենականությանը շարժվողները» գիրքը, որտեղ մանրամասնորեն նկարագրված է սույն թեման: Խորհուրդ եմ տալիս կարդալ այդ գիրքը:

Այս կյանքը

Մենք հիմնավորեցինք, որ եթե գործենք աստվածային սկզբունքների համաձայն, Գատաստանի օրը վարձքի կարժանանանք: Եվ ոչ միայն Գատաստանի օրը, դրա շնորհիվ օրհնություններ կստանանք նաև մեր երկրային կյանքում: Գրված է. «...աստվածապաշտությունն ամեն բանի համար օգտակար է՝ ունենալով *այժմյան* և *գալու* կյանքի խոստմունքը» (Ա Տիմոթ. 4.8, շեղագիրը հեղինակինն է):

Մեր Հայրը ցանկանում է վարձահատույց լինել մեզ և՛ այժմ, և՛ հետո, եթե մենք ականջ դնենք Նրա խրատներին: Գրված է. «Ահա արդարը երկրիս վրա ստանում է իր հատուցումը...» (Առակ. 11.31): Տեսե՛ք՝ ոչ միայն երկնքում, այլև այս կյանքում: Եվ կրկին. «...արդարներին բարիք կհատուցվի» (Առակ. 13.21):

Հակոբոսը շեշտում է. «Սի՛ խաբվեք, ի՛ն սիրելի եղբայրներ, ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում՝ լույսի Հորից...» (Հակոբ. 1.16,17):

Ամեն բարի տուրք Աստծուց է: Ոչ մի չար և կործանարար բան մի՛ վերագրեք Աստծուն. Նա միայն բարիք է տալիս: Աստված ցանկանում է Իր բարիքներով վարձահատույց լինել քեզ այստեղ և հիմա: Նրա տված վարձքը ոչ մի բացասական հետևանք չի ունենում: Մենք կարդում ենք. «Տիրոջ օրհնությունն է հարստացում և իր հետ տրտմություն չի բերում» (Առակ. 10.22, NKJV), «Հավատարիմ մարդը հարուստ վարձք կստանա...» (Առակ. 28.20, NLT): *Հարուստ վարձքը հենց ամբողջ վարձքն է:*

Շարունակելով խորհել Հովհաննես առաքյալի խոսքերի շուրջ՝ ես մտածեցի. «*Քսևի որ ասպագայում սրանալու ենք ամբողջ,*

մասնակի կամ ոչ մի վարձք, ապա կարող ենք ենթադրել, որ նույնը վերաբերում է նաև մեր երկրային կյանքին»: Սա միանգամայն ակնհայտ է դառնում, երբ ուսումնասիրում ենք Հիսուսի կյանքը: Նրան հանդիպած մարդկանցից ոմանք ստացան ամբողջ վարձք, ոմանք՝ մասնակի, ոմանք էլ ոչինչ չստացան: Եկեք քննենք յուրաքանչյուր օրինակը, որպեսզի հասկանանք, թե ինչ է Աստված ցանկանում տեսնել ամեն մեկիս կյանքում:

**Այս գիրքը ձեռք բերելու համար
կարող եք կապ հաստատել՝**

**Հեռ. + 374 94 25 68 04
Էլ. Հասցե՝ market@wolarm.org**

**Ք.Երևան
Թբիլիսյան խճ. 22/9**

ԳՈՎԵՍՏԻ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔԵՐ ՋՈՆ ԲԻՎԵՐԻ ԳՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կարդալով «Պատվի վարձքը» գիրքը՝ դուք կտեսնեք, քե ինչ մեծ նշանակություն է տալիս Աստված միմյանց պատվելուն, որը պետք է դառնա մեր կյանքի անբաժանելի մասը»:

— **ՋՈՅՍ ՄԱՅԵՐ**, *հանրաճանաչ գրքերի հեղինակ և աստվածաշնչյան ուսուցիչ*

«Ջոն Բիվերի գրքերը և՛ ժամանակակից են, և՛ դասական: Նա գրում է մեր ժամանակների շնչով՝ խոսելով այսօրվա աշխարհի հետ, բայց միաժամանակ ընթերցողին առաջնորդում է դեպի Աստուծո խոսքի հավիտենական իմաստությունն ու ճշմարտությունը... Իր հանրահայտ գրքերում հավատարիմ մնալով Աստուծո խոսքին՝ նա մեզ ուղղորդում է դեպի ճշմարտությունը»:

— **ՋԵՐ Վ. ՀԱՅՖՈՐԴ**, *«Ինդերնեյշնլ Գորսոուեր Չրչիս»-ի նախագահ*

«Պատվի վարձքը» կարդալուց հետո ցանկություն ես ունենում պատվելու հենց իրեն՝ գրքի հեղինակին, որպես իմաստությամբ լցված աստվածաշնչյան ուսուցչի և գրողի: Հաստատելով, որ միմյանց պատվելը պետք է սրտաբուխ լինի, Ջոնն ընթերցողին տանում է մի ճանապարհորդության, որտեղ բացվում են մարդկային փոխհարաբերությունների բազմազան շերտեր: Նա յուրաքանչյուրին ոգեշնչում է սպրեկ այնպիսի կյանքով, որն առատ վարձք է բերում»:

— **ԲՐԱՅՆ ՀՅՈՒՍԹՈՆ**, *«Հիյունգ» հեղեղեցու ավագ հովիվ, Միդնեյ, Ավստրալիա*

«Երբ առաջին անգամ կարդացի «Պատվի վարձքը» գիրքը, հասկացա, որ հանդիպել եմ մի դասական գլոխգործոցի, որը կարող է մեծապես ազդել հեղեղեցիների, ամուսնությունների, ընտանիքների և աշխատանքային փոխհարաբերությունների վրա: Գա մի բանակի է, որը բացում է առաջնադաս, բարեկամության ու հաջողության դռները այս և գալիք կյանքում: Այս գիրքը, անխոս, Ջոն Բիվերի՝ մինչև այժմ գրած գրքերից լավագույնն է»:

— **ՋԵՆՏԵՋԻՆ ՖՐԱՆԿԼԻՆ**, *«Չրի Չեյկլ»-ի ավագ հովիվ*

«Ջոնը, օգտագործելով արժանահավատ պատմություններ և բարձր հայացք գցելով Սուրբ գրքի վրա, բացահայտում է պատվի հավերժական սկզբունքը: Նա խոսում է այն մասին, որ մենք վարձք ենք ստանում, երբ պատվում և բարձր ենք գնահատում մեզ շրջապատող մարդկանց: Շատ կարևոր է, որ մենք հասկանանք այս ճշմարտությունը»:

— **ԴԱՐԼԻՆ ՉԵՆ**, *«Հիյունգ» հեղեղեցու փառաբանության ավագ, Միդնեյ, Ավստրալիա*

«Ջոն Բիվերն օժտված է աստվածաշնչյան տեքստը մանրամասն ուսումնասիրելու հազվագյուտ տաղանդով: Ընթերցողին կգարնացնեն նրա բարձր և խորաբախանց դիտարկումները»:

— **ՓԱՐԼԻՇԵՐՍ ՎԻԲԼԻ**